

ՃԵՄԱՐԱՆ Մ. ԱԹՈԽՈՅ

Դեկտ. 15-ին Ճեմարանի բակում հանդիսով բացուեց Դամառ Քաթիպայի արձանը, որ կանգնած է Հ. Նախիջևանցի յայտնի վաճառական պ. Ա. Պօղոսեանի ծախքով և քանդակագործ պ. Տէր Մարուքեանի աշխատութեամբ՝ որի բուն օրինակը գտնուելում է հանգուցեալ բանաստեղծի գերեզմանի վերայ, Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքում։ Այդ օրը պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց Մ. Տաճարում հանգուցեալ բանաստեղծի համար, ապա Մ. Աթոխի միաբանութիւնը, Ճեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտներ և բաւական ստուար բազմութիւն, որի մէջ կային նաև Երևանից եկած ներկայացուցիչներ ու հանդիսականներ՝ դիմեցին դէպի Ճեմարանի բակը և շրջապատեցին արձանը՝ Ճեմարանի երգեցիկ խումբը երգեց քառաձայն ներդաշնակութեամբ «Տէր կեցն» օրհներգը, ապա բացուեց արձանը, կարդացուեց կարճ աղօթք և «Հոգւոց» ասուեցաւ. և որովհետեւ դրսի ցուրտ օղի մէջ ոչ աշակերտները կարող էին շատ երգել և ոչ բազմութիւնը երկար կանգնել՝ ներկայ եղողները հրաւիրուեցան Ճեմարանի հանդիսարան, հանդէսն այնուեղ շարունակելու։

Արձաննը Ճեմարանի բակում կանգնելու համար պ. Ա. Պօղոսեան ամիսներ առաջ թոյլտուութիւն էր խնդրել Դեր, Յուսիկ եպիսկոպոսի միջոցաւ Վեհափառ Հայրապետից, և նորին Սրբութիւնը հաճութեամբ ընդունելով նորա խընդիրը՝ պատուիրել էր մեզ պ. Տէր Մարուքեանի հետ տեղ ուղաշել։ Ապա ստացուել էր կիսարձանը Ճեմ.ի Վարչութեան անտևով։ Մի քանի շաբաթ յետոյ եկել էր պ. Տէր Մարուքեան, պատրաստել էր պատուանդանը և կիսարձանը դրել իւր տեղում։ Վերջապէս յիշեալ ամսաթուից երկու օր առաջ ներկայացել էր պ. Ա. Պօղոսեան և ցանկութիւն յայտնել, որ արձանի բացումը տեղի ունենայ կիւրակէ օր իւր ներկայութեամբ։ Բնականաբար Ճեմարանի ներկայ Վարչութիւնը, որ իւր դիւնում ոչ մի պաշտօնական

գրութիւնն չունի այս արձանի վերաբերեալ և աւելի կողմանակի հանդիսատես էր եղել մինչև այդ ժամանակ կատարուած աշխատութիւններին՝ չեր կարող երկու օրուայ մէջ փառահեղ հանդէսներ պատրաստել, մանաւանդ որ սկզբում տատանուում էր՝ ովհաք էր արդեօք վեհափառ Հայրապետի մօտալուտ դալստեան սպասել, որ արդէն ճանապարհի վերայ էր Ս. Աթոռ վերադառնալու համար, թէ ոլ. Պօղոսեանի ցանկութիւնը յարգելով (որին անյետաձգելի տուերական գործեր շտապեցնում էին), դիմել, թոյլտուութիւն ստանալ և կիւրակէ կատարել բացման հանդէսը։ Այնուամենայնիւ յաջողուել էր այն պիսի մի ընտանեկան համեստ և ամփոփ հանդէս կազմել, որ թէ ոլ. նուիրատուն և թէ հանդիսականները շտագո՞ն սրտով հեռացան—բայց մի քանի հրապարակախօսուներից։

Չենք հասկանում, ինչ տարօրինակ մոլութիւնն է ստիպում այդպիսիներին անպատճառ մութ գոյներով նկարել ամէն բան, որ կատարուում է ո. Էջմիածնի մէջ և նորու ճեմարանի յարկի տակ Կուղէինք իմանալ՝ երբ և որտեղ, խօսքով կամ գրչով, Գամառ-Քաթիպայի գործունեութիւնն ու դրական արժանիքն աւելի գեղեցիկ աւելի պարզ, աւելի խորիմաստ ու բազմակողմանի գնաշ հատութիւնն է գտել, քան այն մի քանի տող բանաստեղծութեան մէջ, որ կարդաց այդ հանդիսին ոլ. Յ. Յովհաննիսեան։ Արդեօք շատ հանդէսներում այնպէս անպաճոյն, բայց ջերմ և ամէնքին հասկանալի խօսքեր են խօսում, ինչպէս խօսեց և ոլ. Ս. Պօղոսեանից Ճեմարանի ստացած արտաքոյ կարդի նուերի նշանակութիւնը բացատրեց տեսուչ ոլ. Կոստանեան։ Ե՞րբ պէտք է վերջ տրուի այնպիսի անհամութիւնների, ինչպիսին է՝ փառաբանել բանաստեղծին, որի միակ փափազն է եղել ո. Էջմիածնում թաղուել, և «տիրացու» ու նման մակդիրներով անարգել նոցա, որոնք կհամարձակուեն մատնանիշ անել այդ փափագի վերայ և նշանակութիւնը բացատրել։ Ե՞րբ պէտք է վերջ տրուի այն երդիծական անմտութեան,

որով խանութի դործակատարը հայերէնի դասեր է տաշվան և հինգ տարուայ հայերէն լեզուի և հայերէն գպրութեան հմտագոյն ուսուցչին. — այն ցանցառ ժողովը՝ դասիրութեան վերջապէս, որով հրաւիրում են ամբոխին կոտրատել ազգային գպրոցի գոներն ու լուսամուտները, երբ երեք հարիւր հոգի հազիւ տեղաւորող դահլիճի մէջ չեն կարողանում երեք հազար հոգու համար տեղ անել. — Լաւ էր, որ դոնէ Հ. կոմիտասի երկու օրուայ մէջ թէ քառաձայն եղանակած և թէ երգել տուած «Հիմի էլ լոենք»-ին ու այլ երգերին հաւանել էին. առանց յիշելու ի հարկէ, թէ քանի հանդէսներում այդիսի երգեցողութիւն են լսել:

Արձանի բացման միջոցին պսակներ դրին՝ ձեմարանի աշակերտները թարմ կանաչից և ծաղիկներից, «Երևանի երիտասարդութիւն», «Երևանի մի խումբ յարգողներ», «Երևանի աշակերտներ և աշակերտուհիներ» և «Երևանի հայուհիներ» արուեստական ծաղիկներից. Վանեցի Տէր Արիստակէսեան եղբայրներ՝ արծաթից, իրենց սեփական ճարտարարուեստ դործ: Արձանը գտնուում է ձեմարանի հիւսիսային բակում, երեսը դէպի Մ. Տաճար դարձրած, և պատուանդանի վերայ դրոշմած է բանաստեղծի «կտակը».

«Կեանքիս մէջ մի հատ սին վառք ունեցայ,

«Ս. էջմիածնում թաղուել ցանկացայ.

«Սերական իմ ազգ, թէ Աստուած սիրես,

«Այս իմ մի հատիկ իղձու կատարես:

Ստորև փորագրուած են ծննդեան (1830 նոյեմբեր 8) և մահուան (1892 օգոստոս 22) թուականները. ապա մի փոքրիկ պղնձէ տախտակի վերայ նուիրողի անունը: Կիսարձանը բրոնզեայ է՝ յաջողուած դործ. պատուանդանը՝ տեղական կարմրաւուն քարից:

Կ. Վ.



Դ Դեկտեմբերի 17-ի երեկոն ա. էջմիածնի ձեմարանի համար ծանր և ամենատխուր ժամերից էր։ Անսպասելի կերպով նա զրկուեցաւ իւր երիտասարդ՝ մի ուսուցչից՝ իւր մի թարմ ոյժից։ Ճահուան անգութ մանդաղը կտրեց վահան Նալբանդեանի կեանքի թէլը՝ ողերուած դորւ ծունէութեան հէնց այն միջոցին, երբ ուսուցիչ և աշակերտ առանձին սիրով և յուսով նայում էին դէսի այդ աշխատաւոր մշակը, դէսի նրա դեղեցիկ դաղափարը՝ սպասում էին նորա համեստ, անվերջ աշխատանքի դեղեցկադոյն պառւղներին։

Կարճատե՛ հիւանդութիւնը բաւական եղաւ մահուան վէրք հասցնելու կեանքի մատաղ զինուորին և նա դեկտեմբերի 17-ին երեկոյեան յանկարծակի փակեց իւր աշքերը յաւիտեան։ Մաքուր և անարատ որպէս բիւրեղ, ժրաշան որպէս մեղու և լուրջ որպէս ծերունի՝ նա այս բոպէիս կանգնած է աշքիս առաջ իւր թալկադէմ, բայց գրաւիչ դէմքով։ Աչքիս առաջ է նորա դին իւր կիսաբաց աչքերով և կիսաբաց բերանով, որի շրթանց վերայ հանգել էր վերջին խօսքը, որը կարծես չէր կարողացել՝ ժամանակ չէր ունեցել աւարտելու, և այժմ ճգունում էր արտասանել։ Օ՛, նա ճիշտ է ձայն չհանեց, ճեռք չը մեկնեց և մերը սեխմելով մնաք բարե չասաց, բայց նորա հանգած աչքերն ու անբարբառ դէմքն աւելի ուժեղ կերպով խօսեցին մեր որտի և յիշողութեան հետ։

Վահան Նալբանդեանը բնիկ Վանեցի էր, ծնուած 1876-ին, Տփխիս գաղթած 1888-ին, երբ և մտել էր Ներսիսեան գլուխոց։ Աւարտելուց յետոյ Վեհափառ Հայրապետի հրամանաւ նա նպաստ ստացաւ Քամոյեան եկեղեցուց և գնաց Գերմանիա՝ իւր ուսումը շարունակելու։ Այստեղից փիլ գոքտորի աստիճանով և լուրջ պատրաստութեամբ վերադարձաւ 1901 թուին՝ իւր ժողովուրդի վերածնութեան դործին ծառայելու բուռն տեհչանքով։ 1902 թուի սեպտեմբերին ուսուցիչ հրաւիրուեցաւ ճեմարան, կարճ ժամանակում համակրութիւն վաստակեց, և դեռ դործունէութեան առաջին քայլափոխի վերայ կնքեց

այսպէս իւր մահկանացուն, 27 տարեկան հասակում։ Թաղմանը մասնակցում էին բոլոր միաբաններն ու ճեմառանը իւր ամբողջ կազմով։ Տփխխախց եկել էին մայրն ու քոյրը պ. Մամաջանի հետ։ 19-ին տեղի ունեցաւ թաղումը ո. Գայանէի վանքում։ Պատարագին Տ. Կորին վարդապետը զգացուած դամբանական խօսեց, ճեմարանի բարձր դասարանների աշակերտներից մէկը իւր մի սրտաբուխ ոտանաւորը կարդաց տաճարում և մի ուրիշը խօսեց գերեզմանի վերայ, որ փորած էր տաճարի հիւս, կողմում։ Ստ. Պալասանեանի և Վ. Աբովեանի գերեզմաններին մօտ։

Դագաղի վերայ դրուած էին երեք պսակ ճեմարանի կողմից՝ ուսուցչական խմբից, ուսանողներից և աշակերտներից առանձին առանձին, երկու պսակ հայրենակիցներից և մի պսակ պ. Մամաջանից։ Երեակայել պէտք է յուսահատմօր և քրոջ վիշտն այն պազ հողաթմբի առաջ, որի տակ հանդչում էր սիրասուն վահան նալբանդեանը։ Բնութիւնը շտալեց կարծես ծածկել անսպասելի կորուստը։ Երկու օրից յետոյ թարմ գերեզմանը ծածկուեց ձիւնի սպիտակ սաւանով։ Բայց հանգուցեալը հեշտ մոռացուող դէմքերից չէ և կապրի իւր բարեկամների սրտերում քանի նրանք բարախում են։ — Հանդիսու ոսկորներիդ վաղաթառամ ծաղիկ, թող մեր ջերմ արցունքները ցողեն այն հողն ու դամբարանը, որը ծնաւ և ընդգրկեց քեզ։ Թող Ալարիշը սփոփէ վշտացած սրտերն և մարդակարօտ հայ անդաստանին բազմաթիւ նալբանդեաններ պարդեւ։

Ե. Ճ. Վ. Մ.

Ա.Ա.ՏՈՒՄ.ՇՈ.ՏՈՒՐ Վ. ՏԵՇ ՅԱ.ԲՈՒԹԻՒՆԵԱՆ



Անցեալ օգոստասկ 18-ին մի խումբ մարդիկ Գետաբեկից Զարեքայ անապատ գալով անցայտ չարագործների